ԴՈՒ ՊԵՏՔ ԵՍ ՏԻՐՈՋԸ

Մարկոս 11:1-11

«[1] Երբ մոտեցան Երուսաղեմին, Բեթփագեին ու Բեթանիային՝ Ձիթենյաց լեռան մոտ, Հիսուս իր աշակերտներից երկուսին ուղարկեց [2] և նրանց ասաց. «Գնացե՛ք դիմացի գյուղը և հենց այնտեղ մտնեք, մի կապված ավանակ կգտնեք, որի վրա դեռ ոչ ոք չի նստել. արձակե՛ք այն և բերե՛ք: [3] Ու եթե որևէ մեկը ձեզ ասի՝ "Ինչո՞ւ եք դա անում", ասե՛ք, որ այն պետք է Տիրոջը, և նա այն իսկույն այստեղ կուղարկի»: [4] Նրանք գնացին ու ավանակը գտան փողոցից դուրս մի դռան մոտ կապված և արձակեցին այն: [5] Այնտեղ կանգնածներից ոմանք նրանց ասացին. «Այդ ի՞նչ եք անում, ինչո՞ւ եք այդ ավանակն արձակում»: [6] Իսկ նրանք պատասխանեցին, ինչպես Հիսուսն էր կարգադրել, և թույլ տվեցին նրանց: [7] Ավանակը Հիսուսի մոտ բերեցին, իրենց հագուստները վրան գցեցին, և նա նստեց ավանակի վրա: [8] Շատերն իրենց հագուստները փռում էին ճանապարհին, ուրիշները ծառերից ճյուղեր էին կտրում ու ճանապարհին փռում: [9] Եվ Հիսուսի առջևից ու հետևից գնացողները աղաղակում էին ու ասում.

«Օվսաննա՛, օրհնյա՛լ է Տիրոջ անունով եկողը.
[10] Օրհնյա՛լ է մեր հոր՝ Դավթի թագավորությունը, որ գալիս է: Օվսաննա՛ Բարձրյալի»:

[11] Հիսուսը մտավ Երուսաղեմ և տաճար գնաց: Շուրջն ամեն ինչ աչքի անցկացնելուց հետո, քանի որ արդեն երեկո էր, տասներկու աշակերտների հետ գնաց Բեթանիա:»

Զաքարիա 9:9

«Մեծապես ուրախացի՛ր, ո՛վ Սիոնի դուստր, ցնծությամբ աղաղակի՛ր, ո՛վ Երուսաղեմի դուստր, ահա քեզ մոտ է գալիս քո թագավորը. նա արդար ու փրկագործ է, հեզ և էշի վրա հեծած, էշի ձագի՝ ավանակի վրա:»

Քարոզի Նշումներ

Հաջորդ Քարոզի Թեման

ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑԻՐ ԱՅՍ ՋԱՏԿԻՆ

Հովիվ Սարօ Խաչիկեան